ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4. 1965 Общественные науки

ԴՐԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սովետահայ պատմաբանները վերջին տարիներին իրենց ուշադրությունը ավելի ու ավելի են սևեռում հայության այն հատվածի վրա, որի պատմության անտեսման հետևանքով սպիտակ էջեր էին մնացել հայ ժողովրդի մշակված պատմության մեջ։ Հայ գաղթօջախների պատմությանը, սփյուռքահայության ազգային-մշակութային կյանքին, գրականությանն ու մամուլին նվիրված՝ գիտական անհավասար մակարդակով կատարված և անհամաչափ ընդգրկումներ ունեցող բոլոր հետազոտություններն էլ, սակայն, շրջանցում էին աշխարհով մեկ ցրված հայկական բոլոր գաղութների կյանքի առանձնահատկություններից մեկը՝ ազգային կուսակցությունների գործունեությունը։

Լ. Խուրշուդյանի՝ ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հրատարակությամբ (Երևան, 1964) լույս տեսած «Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում» աշխատությունը մեր գաղթավայրերի կյանքի նորագույն շրջանի հենց այդ առանձնահատկությունն է շոշափում, բացելով վարագույրը մեր պատմագրության առջև։ Պետք է ասել, որ երկար տարիներ, քաղաքական ու գիտական լուրջ նշանակություն ունեցող այդ հարցը լրիվ անտեսված էր։ Եվ իրոք, Ալ. Մարտունու (Մյասնիկյան) «Կուսակցությունները գաղութահայության մեջ» (Թիֆլիս, 1924) և Ա. Հովհաննիսյանի «Գաղութահայ խնդիրներ» (Երևան, 1925) աշխատություններից հետո, մինչև Հայաստանի կոմունիստական պարտիայի XXII համագումարի որոշումները ոչ մի հետազոտության չէր ենթարկվել կուսակցությունների գաղափարախոսությունն ու գործունեությունը Սփյուռքում, եթե հաշվի չառնենք դաշնակցության հակահայկական վարքագծի այս կամ այն կողմը պարզաբանող հանրամատչելի գրքույկներն ու բանավեճային բնույթ կրող առանձին լրագրական ելույթները, որոնք որպես կանոն վերաբերում են ապազգայնացած այս կամ այն դաշնակ ղեկավարի հակասովետական հերթական մարգանքին։ Լ. Խուրշուդյանի աշխատությունը, ժամանակակից էտապում սփյուռքահայ կուսակցությունների գաղափարախոսությունն ու գործունեությունը քննական տեսակետից ներկայացնող առաջին գիտական ուսումնասիրությունն է, որը առաջին հերթին ողջունելի է հենց այդ իսկ պատճառով։

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից և վերջաբանից։

Առաջին գլխում հեղինակը նախ մատնանշում է, որ արտասահմանի մեկուկես միլիոն հայությունը ևս միջազգային արդի իրադրության պայմաններում բաժանված է երկու հակամարտ ճակատների, և ապա ընդհանուր գծերով ներկայացնում է սփյուռքահայ քաղաքական-հասարակական կազմակերպությունները։ Նա չի մոռանում, որ «Վ. Ի. Լենինը և հայ լենինյանների ավագ սերունդը իր ժամանակին ավել են հայ բուրժուական կուսակցությունների դասակարգային էության փայլուն գնահատականը» և նշելով, որ «մարքսիստների ժամանակակից սերունդը ոչ մի հիմք չի տեսնում Լենինի և հայ լենինյանների կողմից հայ բաղաքական կուսակցություններին ված գնահատականները վերանայելու, և անվերապահորեն ընդունում է դրանք», պատճառաբանում է, թե ինչո՞ւ այսօր անհրաժեշտ է նկատի ունենալ մի նոր ու կարևոր հանգամանք. «Այդ կուսակցություններից ոմանք պատմության զարգացմանը և հասարակական երևույթների փոփոխմանը զուգընթաց, չփոխելով իրենց դասակարգային էությունը, ժամանակակից պայմաններում վարում են այնպիսի քաղաքականություն, որը դարաշրջանի հրատապ հարցերի տեսանկյունից ելնելով, այժմ լիովին իրավունք ունի կոչվելու առաջադիմական»։

Լ. Խուրշուդյանը գտնում է, որ նշված խմբի մեջ են մտնում հնչակյան և ռամկավար-ազատական կուսակցությունները՝ իրենց հարող բազմաթիվ կազմակերպություններով, որոնք հայ կոմունիստների հետ հասել են այն բանին, որ գաղութահայության ճնշող մեծամասնությունը դիրքորոշվի հօգուտ սոցիալիզմի, դեմոկրատիայի և խաղաղության, ի տարբերություն իմպերիալիզմի և հետադիմության ճակատում զինվորագրված չնչին փոքրամասնության՝ դաշնակ վտարան-

դիների ու նրանց մոլորած հետևորդների։ Պարզաբանելու համար, որ «հետպատերազմյան շրջանում տեղի ունեցող պրոցեսն ընդգրկեց նաև սփյուռքահայությունը, նրան ևս բաժանելով երկու լագերի», հեղինակը խոսում է սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատի ստեղծման մասին, սկսած 1943 թվականից՝ ԱՄՆ-ում, Սիրիա-Լիբանանում, Եգիպտոսում, Իրանում, Պաղեստինում, Բալկաններում, Ֆրանսիայում և այլուր։ Միասնական այդ ճակատների համար ընդհանրակաը՝ ՍՍՌՄ հղրայրական ժողովուրդների ընտանիքում Սովետական Հայաստանի էլ ավելի հզորացման գործին նպաստելու պատրաստակամությունն էր, սփյուռքահայության փրկության միակ ուղին՝ հայրենադարձությունը դավանելը։ Ընդհանրական այս գծի կողքին, ճակատների համար միաժամանակ բնորոշը անվերապահ դիրքորոշումն էր ազատության, խաղաղության ու դեմոկրատիայի համար պայքարի ճակատում։ ԱՄՆ-ում այն բացահայտվում էր հակահիտլերյան «պատերազմական ջանքերուն» գործնականորեն օգնելու հոգի վրա, Լիբիա-Լիբանանում՝ արաբ ժողովրդի ազգային-դեմոկրատական շարժմանը աջակցելու գործում և այլն։ Գրքում չի անտեսված նաև սփյուռքահայ առաջադիմական ուժերի համախմբման գործում կարևոր նշանակություն ունեցող այնպիսի մի երևույթ, ինչպիսին էր 1947 թ. ԱՄՆ-ում հրավիրված Համաշխարհային հայկական կոնգրեսը։ Խուրշուդյանը անդրադառնում է նաև Միասնական ճակատի ու նրա գործունեության նկատմամբ դաշնակցության բացասական վերաբերմունքի և շարժումը ձախողելու ուղղությամբ նրա գործադրած միջոցառումների վրա սկսած երկպառակելու փորձերից, մատնություններից ու սպառնալիքներից, վերջացրած բացահայտ տեռորով, որ ոգեշնչվում էր դաշնակների իմպերիալիստական տերերի կողմից։

«Այդ բոլորից հետո առաջանում է այն ճիշտ հարցադրումը,— դրում է Խուրշուդյանը,— որ մի՞թե թույլատրելի է անուշադրության մատնել կամ դաշնակցության հետ նույնացնել հիշյալ քաղաքական կուսակցություններին, ընկերություններին ու միություններին։ Բնականաբար, ոչ։ Եվ շեշտելով անհատի պաշտամունքի շրջանում այս հարցի կապակցությամբ թույլ տրված «կոպիտ սխալը» և «իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում այլ կուսակցությունների հետ դաշինքներ կնքելու լենինյան տեսության խեղաթյուրումը», հեղինակը պարզաբանում է ՍՄԿՊ XX և XXII համագումարներով, Հայաստանի կոմունիստական պարտիայի XX համագումարով և միջազգային կոմունիստական ու բանվորական կուսակցությունների 1957 և 1960 թթ. մոսկովյան խորհրդակցություններով առաջացած խոր բեկումը, որը հրամայական անհրաժեշտություն է դարձնում ոչ միայն «այսուհետև ևս ընդլայնել և ամրապնդել կապերը արտասահմանյան առաջադիմական կազմակերպությունների հետ», այլև մարքս-լենինյան գիտական վերլուծության։ Ովից անցկացնել նրանց գաղափարախոսությունն ու գործունեությունը։

Գիտական այդ վերլուծությունը, որի առաջին լուրջ ու հաջող փորձն է կատարել Լ. Խուրշուդյանը իր աշխատության հաջորդ գլուխներում, անկասկած, արտասահմանի առաջադիմական ուժերին կօգնի առաջիկայում վերանայել իրենց պրակտիկայի մեջ տեղ գտած որոշ բացերն ու թերությունները։ Հենց այդ էլ գրախոսվող գրքի երկրորդ ողջունելի կողմն է։

Աշխատության երկրորդ գլխում գիտական լուրջ ու հիմնավոր վերլուծության է ենթարկվել դաշնակցություն կուսակցության գործունեությունը։ Առաջին հերթին փաստերի լեզվով մերկացնելով դաշնակների խաբեությունն այն մասին, որ իբր 1941—47 թթ. իրենք դադարեցրած են եղել պայքարը ՍՍՌՄ-ի դեմ, Խուրշուդյանը պատմում է «Բոլշևիզմից ազատագրվելու Ամերիկյան կոմիտեի» հետ դաշնակցության գործակցության և «Փարիզյան բլոկին» նրա անդամակցության մասին, ընդգծելով դաշնակների՝ իմպերիալիզմի ջատագովի ու կամակատարի էությունը։ Ապա նա հմտորեն հերքելով դաշնակցության «սոցիալիստական» կուսակցություն լինելու առասպելը և բացատրելով մինչև 1907 թ. նրա տեսաբանների աշխատություններում մարքսիստական որոշ ֆրազեոլոգիայի թափանցման պատճառները, կանգ է առնում այն իրողության վրա, որ լրիվ չափով դիմակազերծված չլինելով, դաշնակներն այսօր էլ տակտիկական նկատառումներով ձևանում են «սոցիալ-դեմոկրատ», բայց իրականում արդեն իսկ իրենց տեսությամբ ավելի ու ավելի են գլորվում դեպի ամերիկյան իմպերիալիզմի ջատագովությունը, հակակոմունիստական հիստերիան։

Այնուհետև Խուրշուդյանը պարզաբանում է ամերիկյան ռեակցիոն շրջանների հուշարարությամբ սովետական իշխանության դեմ դաշնակների հորինած չարամիտ հերյուրանքները, սովետական իրավակարգի ներքո Հայաստանի նվաճումներին բաց աչքերով նայելու, բայց ոչինչ չտեսնելու նրանց համառությունը։ Ցարական երբեմնի կիսագաղութ Հայաստանը, շնորհիվ սովետական կարգերի, այսօր դարձել է ինդուստրիալ հզոր ու բարգավաճ երկիր, որը համբավված է աշխարհով մեկ։ Տնտեսության հետ համաչափ զարգացել են նաև կուլտուրան ու դիտու-

թյուններ, որոնք հնարավորություն են տալիս խոսելու իսկական ոսկեդարի մասին։ Հեղինակի համար մեր հայրենիքի նվաճումները ապացուցող փաստերի թվարկումն անգամ ինքնանպատակ չէ։ Պարզվում է, որ ողջախոհ մտքի տեր յուրաքանչյուր մարդու համար պարզ ու հասկանալի իրականությունը, որի մասին օր չի անցնում, որ չվկայեն Հայաստան այցելող օտար անձնավորությունները, այն աստիճանի քայքայում է դաշնակների ջղերը, որ նրանք օրն ի բուն ազմրկում են Հայաստանի «աղքատության» ու «հետամնացության» մասին, ողբալով կրկնակոշիկ չունեցող «ոտաբոբիկ հայի ոտքերը»։

Խուրշուդյանը հատուկ ուշադրությամբ կանգ է առնում այն իրողության վրա, որ դաշնակ գրչակները, հետևելով իմպերիալիստական առավել կատաղի ու խելագար շրջաններին, ժխտում են խաղաղ գոյակցության հնարավորությունը և պայքարում համաշխարհային խաղաղության ամրապնդման դեմ, որովհետև հակառակ դեպքում կզրկվեն «կանաչ մանանայից», ինչպես դեռ 1950 թ. խոստովանել է Ռ. Դարբինյանը։ Այնուհետև ներկայացնելով դաշնակների թշնամական վերաբերմունքը ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ, չի մոռանում ձաղկել և արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման ժամանակակից էտապի դրսևորումը հանդիսացող «հայոց դատի» հանդեպ դաշնակների վերաբերմունքը։ Հեղինակին հաջողվել է ցույց տալ, որ դաշնակցության համար «հայոց դատը» ներկա մոմենտին ոչ թե արդարության և արդարացման գործն է ջարդված ու տիրահանված արևմտահայության ակնկալությունների և պահանջների հողի վրա, այլ պարզապես «Սովետական Հայաստանում դաշնակցական կարգերի վերականգնման հասկացությունը»։

«Դաշնակցության պառակտողական քաղաքականությունը կործանարար է սփյուռքահայության համար» — ահա հիմնավոր այն եզրակացությունը, որին հեղինակի հետ անգամ է ընթերցողը դաշնակ արկածախնդիրների քարոզին ու գործին ծանոթանալուց հետո։

Այս բոլորից երևում է, որ Խուրշուդյանը առանց պատճառի չէ, որ իր գրքի ամենից ծավալուն գլուխը հատկացրել է Սփյուռքում դաշնակցության շարաղետ գոյությանը։ Հեղինակը հմուտ ու վարպետ նշտարով է հերձել սփյուռքահայությանը շնչահեղձ անելուն ծառայող այդ ուռուցքը։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում դաշնակցության «տեսության» յուրաքանչյուր նրբերանգ նա որսացել է խորաթափանց հայացքով և բացատրել գիտական բարեխիղճ վերլուծությամբ։ Միաժամանակ, դաշնակների «գաղափարախոսության» հետադիմական ամբողջ էությունը լրիվ չափով բացահայտելու մտահոգությամբ, նա կուռ տրամաբանությամբ հյուսված իր վերլուծությունը ամրապնդել է բազմաթիվ փաստերի շարադրանքով։

Իր հիմնական խնդիրը համարելով ավելի շուտ Սփյուռքի կուսակցությունների տեսության ու դավանանքի գիտական վերլուծությունը, քան նրանց պատմությունն ու կոնկրետ գործունեությունը շարադրելը, Լ. Խուրշուդյանը բծախնդրորեն բազում փաստերից առանձնացրել է ամենից էականներն ու բնորոշները և դրանք օգտագործել դաշնակցության տեսական այս կամ այն դիրքորոշումը ընդգծելու և նրա խարեությունները քողազերծելու համար։

Հեղինակը շատ լավ է ըմբռնել, որ նենգությունը հետևողական տակտիկա դարձրած դաշնակցության համար տիպական է նեղն ընկնելու դեպքում տեսական ելույթից հրաժարվելը՝ օգտվելով կոնկրետ փաստերի անհայտությունից, նույնիսկ այդ ելույթը անհատական ու պատահական հռչակելը՝ պահանջելով, որ կոնկրետ գործը միայն համարվի «հավաքական», ուրեմն և ամբողջ դաշնակցությունը որպես նրա պատասխանատուն պարտավորեցնող ելույթ։ Այսպես պատահեց, օրինակ, Սիրիայի ազգային անկախության դեմ 1956—1957 թթ. նյութված ամերիկյան դավադրության կապակցությամբ։ Հերքելու համար իմպերիալիստական այդ դավադրության մեջ իրենց մասնակցությունը ապացուցող տվյալները, որոնք հրապարակված էին Դամասկոսի կոմունիստական «Ան-Նուր» թերթում (1958 թ. հունվարի 14) դաշնակները գործին «անհատական» բնույթ տվեցին։ Ավելի քան 3 տարի անց միայն, 1961 թ. օգոստոսին, Սիրիայի անվտանգության օրգաններին հաջողվեց դիմակազերծել ամերիկյան իմպերիալիզմի հաշվին գործող դաշնակ լրտեսների ցանցը՝ իր զենք ու ռազմամթերքով և դավադրական այլ միջոցներով։

Հեղինակը իրավամբ կարևոր տեղ է հատկացրել նաև 1941—1947 թթ. իրենց հակասովետական պայքարը իբր դադարեցրած լինելու մասին դաշնակցականների տարածած առասպելի քողազերծմանը։

Մերկացնելով նրանց հակասովետական գործունեությունն այդ շրջանում, Խուրշուդյանը ցույց է տալիս, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գերմանական լրտեսական ցանցում ակտիվորեն ընդգրկված էին նաև դաշնակցականները։

Բարեյիդմ գիտնականի իր արժանիքները առավել ցայտունությամբ է դրսևորել Լ. Խուրշուդյանը հնչակյան կուսակցության դիմանկարը տալու մեջ։ Իրոք, պետք է խոստովանել, որ ուսումնասիրողի գործը հնչակցնող քիչ բան ունի հնչակյան կուսակցության գործունեությունը։ Նա ծնվել ու սնվել է մանրբուրժուական հողում (80-ական թթ. Արևմտյան Հայաստանում չէր էլ կարող ուրիշ կերպ լինել), բայց չի հրաժարվել երբևէ հայ իրականության մեջ առաջին մարքսիստական-պրոլետարական կազմակերպություն կոչվելու իր հավակնությունից։ Արևմտահայության ազգային իրավիճակից դուրս եկած մի կազմակերպություն, որն իր հեռավոր սոցիալական երազանքով գնահատական է ակնկալել մշտապես, պահանջելով, որ ոչ-ոք չվիրավորի իր դյուրազգացությունը՝ Մարքսի ուսմունքի տառին ու ոգուն մինչև վերջ հավատարմորեն հետևած չլինելու մասին թեկուզ փոքրագույն ակնարկումով։ Պարզ է, որ այսպիսի մի հակասականություն որևէ ուսումնասիրողի գործը հեշտացնող ազդակ չի կարող լինել։ ՀԿՊ XXII համագումարում նախանշվեց գիտական այն ճիշտ մոտեցումը, որն անհրաժեշտ էր ցուցաբերել ժամանակակից էտապում հնչակյան կուսակցության գործունեության նկատմամբ։ Լ. Խուրշուդյանը այդ է որ դիտական խոր վերլուծությամբ կենսագործել է իր աշխատության երրորդ գլխում։

Առաջին ենթագլխում հեղինակը մանրամասնորեն կանգ է առել հնչակյան կուսակցության գաղափարական և քաղաքական մի քանի հարցերի վրա։ Այնտեղ լենինյան դրույթների և Շահումյանի ելույթների լույսի ներքո պարզաբանվել են հնչակյան կուսակցության ազգային նկարագիրն ու մանրբուրժուական դիմագիծը, մանրամասն քննարկվել է նրա ծրագրի սոցիալիստական երանգավորման փորձերը, դարասկզբին Արևելյան Հայաստանի հայության սոցիալական պայքարի նկատմամբ հնչակների դիրքավորումն մեջ նկատվող արմատական բեկման պատճառները, Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո կոմունիստական շարժման հանդեպ նրա վերաբերմունքը, սոցիալ-դեմոկրատիայից անկախ գոյություն պահպանելու նրա պատճառաբանությունը և այլ հարցեր։ Այս բոլորը պարզաբանելուց հետո Խուրշուդյանին հաջողվում է ընթերցողին համոզել, որ «ինչպես իր գոյության առաջին շրջանում, այնպես էլ ժամանակակից էտապում, հնչակը վարում է էկլեկտիկ քաղաքականություն, որոշ երկրներում տեղի առաջադիմական ուժերի հետ մասնակցում է ազգային-ազատագրական պայքարին, մյուս վայրերում, ընդհակառակը, զբաղվում է միայն ազգային գործերով, լիովին շրջանցելով և ոչ մի կապ չպահպանելով տեղի հեղափոխական շարժումների հետ»։

Չի կարելի հեղինակի հետ չկրկնել, որ հնչակյան կուսակցության գնահատման հարցում հայ մարքսիստների ավագ և երիտասարդ սերունդների միջև հակասություններ «չեն եղել, չկան և չեն կարող լինել»։

Ժամանակակից էտապում, հնչակյան կուսակցությունը իր տեսական ելույթներով և կոնկրետ գործունեությամբ, իր մամուլով և մտավորականությամբ շատ բանով է արժանի «առաջադիմական» կոչման, ինչպես հիանալի վերլուծությամբ ցույց է տվել Լ. Խուրշուդյանը իր աշխատության հաջորդ ենթագլուխներում։ Նա վեր է հանել այն իրողությունը, որ հնչակյան կուսակցությունը, սփյուռքահայ առաջադիմական մյուս ուժերի հետ միասին, իր բոլոր հնարավորությունները ի սպաս է դրել խաղաղության և առաջադիմության, ազատության ու դեմոկրատիայի համար մղվող պայքարին, անողոքաբար քննադատելով միջազգային իմպերիալիզմի ռազմամոլ քաղաքականությունը, միաժամանակ մերկացնելով իմպերիալիզմը որպես նեխվող հասարակարգ, իսկ դաշնակներին՝ որպես նրա նվիրյալ վարձկանները։ Հնչակյան կուսակցությունը, հակառակ Սփյուռքում գոյություն ունեցող բազմատեսակ դժվարությունների, մշտապես հանդես է գալիս Սովետական Միության և Հայաստանի ջերմ համակրողների ու պաշտպանների դիրքերում, չենթարկվելով դավաճան դաշնակների՝ մատնություններով ու զրպարտություններով իրեն ահաբեկելու փորձերին։ Հեղինակը անդրադարձել է նաև այն բանին, որ հետպատերազմյան շրջանում ծավալված ազգային-ազատագրական պայքարը վայելում է հնչակյանների համակրանքն ու աջակցությունը և որ գաղութային սիստեմի լիկվիդացումը մեր օրերում նրանց համար դարձել է իրենց գործունեության նպատակակետերից մեկը։

Իր ուսումնասիրության չորրորդ գլխում Լ. Խուրշուդյանը վերլուծում է ռամկավար-ազատական կուսակցության գործունեությունը և նրա դերը ժամանակակից սփյուռքահայ կյանքում։ Առաջին ենթագլխում նա պարզաբանում է ռամկավարների դիրքը սոցիալիզմի և իմպերիալիզմի համաշխարհային սիստեմների նկատմամբ։ Կուսակցության համառոտ նախապատմությունից և նրա գաղափարախոսության ուրվագիծ բնութագրումից հետո հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես ռամկավար-ազատագրական կուսակցությանը իր դասակարգային էությամբ բուրժուական լինելով հանդերձ, սփյուռքահայության ապագան կապում է Սովետական Հայաստանի հետ, թե ինչպես

ռամկավարները հայկական հարցի լուծման երաշխիքը տեսնում են սոցիալիզմի ու դեմոկրատիայի լաղերի հաղթանակի մեջ, մի բան, որ «օբյեկտիվորեն պետք է տաներ, և իրոք տարավ ռամկավար-ազատական կուսակցությունը դեպի սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատը»։ Այսպիսին լինելով հանդերձ, իրավամբ դգուշացնում է Խուրշուդյանը, ռամկավարները անողոքաբար քննադատում են ոչ թե իմպերիալիզմի էությունը, այլ նրա քաղաքականության մասնավոր կողմերը և երբեմն աղճատված կամ խեղաթյուրված են ներկայացնում ՍՍՌՄ-ի ներքին ու արտաքին քաղաքականությունը։ Ի՞նչ բանում է կայանում, ուրեմն, ռամկավարների ուռաջադիմական և Սովետական Հայաստանի պաշտպան դառնալու հիմնական գաղտնիքը, հարց է տալիս հեղինակը հաջորդ ենթագլխում և ինքն էլ պատասխանում. «Ռամկավար-ազատական կուսակցությունը իր 2 մտասևեռումների՝ հայության իր հայրենի հողում հզորացման ու բարգավաճման և դրա շնորհիվ հայկական դատի լուծման» ուղիներն էլ կապում է Սովետական Միության և Հայաստանի հետ։ Այստեղից էլ բխում է ռամկավարների մերձեցումը հնչակյանների, հայ կոմունիստների և ընդհանրապես սփյուռքահայ բոլոր առաջադիմական ուժերի հետ ընդդեմ հայրենադավ դաշնակցության։ Ինչպես նախորդ, այնպես էլ այս գլխում, Խուրշուդյանը իր վերլուծություններն ու դրանցից բխող եզրակացությունները հիմնավորում է փաստերով։

Սփյուռքահայ իրականության մեջ գործող կուսակցությունների գաղափարախոսությունն ու գործունեությունը մանրամասն ներկայացնելուց հետո Խուրշուդյանը ծավալուն մի վերջաբանով անում է անհրաժեշտ եզրահանգում. հրեշավոր, անօրինակ սպանդից փրկված հայ ժողովրդի գաղթահայ հատվածը գտնվում է Յուլման շրջանում։ Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները հայության գոյատևման հիմնական ազդակներն են համարում «Սովետական Հայաստանի հզորացումը և Սփյուռքի գալթոջախների սերտ մշակութային կապը նրա հետ, լեզուն և կրոնը»։ Ե՛վ հնչակյանները, և՛ ռամկավարները, և՛ առաջադիմական մյուս հոսանքները սփյուռքահայության փրկության միակ ուղին համարում են զանգվածային հայրենադարձությունը, ելնելով ժողովրդի վերամիավորման ու հզորացման շահերից։ Հենց այդ մտահոգությամբ է, որ Սովետական Միության կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը, ելնելով ժողովուրդների բարեկամության լենինյան քաղաքականությունից, օգնության ձեռք մեկնեցին հայ ժողովրդի սփյուռքահայ հատվածին, կազմակերպելով ներգաղթ, որը լայն թափ է ստացել և հիանալի կազմակերպվածությամբ շարունակվում է մեր օրերում։ Լ. Խուրշուդյանը արխիվային փաստաթղթերի օգտագործումով առաջին անգամ հանգամանորեն վեր է հանել նաև հայրենադարձների նոր ու բարեկեցիկ կյանքը։

Լ. Խուրշուդյանի «Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում» աշխատությունը հայ ազգային կուսակցությունների գաղափարական ու գործնական ներկա կյանքի առաջին ամբողջական և հաջողված գիտական ուսումնասիրությունն է։

Ե. ՆԱՀԱՐՅԱՆ